ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

---

« 04 »  օգոստոս  2022թ.   No 3506 - Ա

# «ԳԵՆԵՏԻԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ: ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԵՎ ՊԵՐԻՆԱՏԱԼ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՂ ՊԱԹՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 20-Ն հրամանի հավելված 1-ի 15-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ մանկաբուժության ամբիոնի վարիչ՝ Կարինե Սարիբեկյանի 15.07.2022թ. հայտը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

1. Հաստատել 2022 թվականից (կրկնողաբար) Երևան քաղաքում կամ առցանց (Զում հարթակ) ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ մանկաբուժության ամբիոնի կողմից կազմակերպվող «Գենետիկան և մանկաբուժությունը: Ժառանգական և պերինատալ ծագումնաբանությամբ առավել հաճախ հանդիպող պաթոլոգիաները երեխաների մոտ» թեմայով դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Գենետիկան և մանկաբուժությունը: Ժառանգական և պերինատալ ծագումնաբանությամբ առավել հաճախ հանդիպող պաթոլոգիաները երեխաների մոտ» թեմայով դասընթացի՝

1) մասնակիցներին շնորհել ՇՄԶ 11 տեսական 10 գործնական կրեդիտ,

2) դասընթացավարներ՝ Նատալյա Մինասյանին շնորհել ՇՄԶ 11 տեսական և 10 գործնական կրեդիտ, Վարդան Սարոյանին շնորհել ՇՄԶ 9 տեսական և 10 գործնական կրեդիտ, Կարինե Սարիբեկյանին շնորհել ՇՄԶ 2 տեսական կրեդիտ:

3.Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Աստղիկ Առաքելյանին՝ եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը հայտատուին:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**Հավելված**
**ՀՀ առողջապահության նախարարի**
**« 04 » օգոստոս 2022թ.**
**N 3506 - Ա հրամանի**

**ԾՐԱԳԻՐ**

**«ԳԵՆԵՏԻԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ: ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԵՎ ՊԵՐԻՆԱՏԱԼ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՂ ՊԱԹՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (առկա՝ ՀՀ ԱՆ ԱԱԻ, Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն և/կամ առցանց («Զում» հարթակ)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Մանկաբուժության ամբիոն

| | | |
|---|---|---|
| **Օր 1**<br>**Անցկացման վայրը՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ** | | |
| 11:00-11:30 | Դասընթացի բացում, մասնակիցների ներկայացում | Կարինե Սարիբեկյան / Նատալյա Մինասյան |
| 11:30-12:00 | Դասընթացի նպատակների, օրակարգի ներկայացում | Կարինե Սարիբեկյան / Նատալյա Մինասյան |
| 12:00-13:00 | Նախաթեստ | Կարինե Սարիբեկյան / Նատալյա Մինասյան (Առցանց) |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Դասախոսություն**<br>Պրենատալ սկրինինգների կարևորությունը պտղի ներարգանդային ախտաբանությունների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության համար:Ինչ սկրինինգներ են արվում Հայաստանում: Պրենատալ կոնսիլիում | Նատալյա Մինասյան / Կարինե Սարիբեկյան |
| 15:00-16:00 | **Դասախոսություն**<br>Ժառանգական և բնածին հիվանդությունների հայտնաբերմանն ուղղված սկրինինգները ծննդատանը | Կարինե Սարիբեկյան / Նատալյա Մինասյան |
| 16:00-16:30 | Օրվա նյութի ամփոփում, հարց ու պատասխան | |
| **Օր2**<br>**Անցկացման վայրը՝ Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն** | | |

| | | |
|---|---|---|
| 10:00-11:00 | **Գործնական աշխատանք**<br>Ծանոթացում կենտրոնի կառուցվածքին, գործառույթներին, մատուցվող ծառայությունների տեսակներին և ծավալներին:<br>Քննարկում, հարց ու փառասխան | Նատալյա Մինասյան / Վարդան Սարոյան |
| 11:00-12:00 | **Դասախոսություն**<br>ԴՆԹ-ի քիմիական կառուցվածքը և ռեպլիկացիան<br>ԴՆԹ մուտացիաների հիմնական տիպերը և մեխանիզմները | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| 12:00-13:00 | **Գործնական աշխատանք**<br>ԴՆԹ-ի քիմիական կառուցվածքը և ռեպլիկացիան:<br>Թեմատիկ տեսաֆիլմի դիտում և քննարկում | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| 12:00-13:00 | **Դասախոսություն**<br>Մարդու ժառանգականության հիմքում ընկած բջջային և մոլեկուլային մեխանիզմների նկարագրությունը | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Գործնական աշխատանք**<br>Մարդու ժառանգականության հիմքում ընկած բջջային և մոլեկուլային մեխանիզմների նկարագրությունը<br>Վարժանք, թեմատիկ տեսաֆիլմի դիտում | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| 15:00-16:00 | **Դասախոսություն**<br>Քրոմոսոմային հիվանդությունների և բնածին արատների նկարագիրը և գենետիկական հիմքերը<br>Տերմինների բառարան | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| 16:00-16:40 | **Գործնական աշխատանք**<br>Քրոմոսոմային հիվանդությունների և բնածին արատների նկարագիրը և գենետիկական հիմքերը:<br>Իրավիճակային խնդիրներ | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| ***Օր 3***<br>**Անցկացման վայրը՝ *Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն*** | | |
| 10:00-11:00 | **Դասախոսություն**<br>Սրտային արատներով ուղեկցվող համախտանիշներ.<br>Վիլյամսի և Դի Ջորջիի համախտանիշներ | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| 11:00-12:00 | **Գործնական աշխատանք**<br>Սրտային արատներով ուղեկցվող համախտանիշներ. Վիլյամսի համ. Դի Ջորջիի համ. տարբերակիչ ախտորոշում:<br>Թեմատիկ խնդիրներ և քննարկում | Վարդան Սարոյան / Նատալյա Մինասյան |
| 12:00-13:00 | **Գործնական աշխատանք** | Վարդան Սարոյան / |

| | | |
|---|---|---|
| | Ազգակցական կապի գենետիկական տեստավորում:<br>Իրական դեպքերի ներկայացում և քննարկում | Նատալյա Մինասյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Դասախոսություն**<br>Նախածննդյան ախտորոշման մոտեցումները: I եռամսյակում մայրական արյան սկրինինգային թեստեր և պտղի ուլտրաձայնային հետազոտման մարկերներ | Նատալյա Մինասյան /<br>Վարդան Սարոյան |
| 15:00-16:00 | **Գործնական աշխատանք**<br>Նախածննդյան ախտորոշման մոտեցումները I և II եռամսյակում մայրական արյան սկրինինգային թեստեր և պտղի ուլտրաձայնային հետազոտման մարկերներ:<br>Խմբային աշխատանք, թեմատիկ խաղային դերակատարումներ | Նատալյա Մինասյան<br>Վարդան Սարոյան |
| 16:00-16:30 | Օրվա նյութի ամփոփում, հարց ու պատասխան | |
| **Օր 4**<br>**Անցկացման վայրը՝ Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն** | | |
| 10:00-11:00 | **Դասախոսություն**<br>Իմպրինտինգ. Անգելմանի/Պրաֆեր-Վիլլիի համախտանիշների տարբերակիչ ախտորոշում | Վարդան Սարոյան /<br>Նատալյա Մինասյան |
| 11:00-12:00 | **Գործնական աշխատանք**<br>Իմպրինտինգ.Անգելմանի/Պրաֆեր-Վիլլիի համախտանիշներ:<br>Թեմատիկ խնդիրների քննարկում | Վարդան Սարոյան /<br>Նատալյա Մինասյան |
| 12:00-13:00 | **Դասախոսություն**<br>Սեռի հետ շղթայակցված համախտանիշներ և անեուպլոիդիաներ | Վարդան Սարոյան /<br>Նատալյա Մինասյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Դասախոսություն**<br>Արհեստական ինտելեկտը բժշկական գենետիկայի մեջ<br>Face2Gene (FDNA Inc. Boston USA) | Նատալյա Մինասյան /<br>Վարդան Սարոյան |
| 15:00-16:00 | **Դասախոսություն**<br>Պարբերական հիվանդության և այլ աուտոբորբոքային հիվանդությունների աշտորոշման նոր ռազմավարություն և միջազգային չափանիշներ: | Նատալյա Մինասյան /<br>Վարդան Սարոյան |
| 16:00-16:30 | Օրվա նյութի ամփոփում, հարց ու պատասխան | |
| **Օր 5**<br>**Անցկացման վայրը՝ Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն** | | |
| 10:00-11:00 | **Գործնական աշխատանք** | Վարդան Սարոյան / |

| | | |
|---|---|---|
| | Սեռի հետ շղթայակցված անեուպլոիդիաներ և համախտանիշներ տարբերակիչ ախտորոշում:<br>Թեմատիկ խնդիրներ, քննարկում | Նատալյա Մինասյան |
| 11:00-12:00 | **Գործնական աշխատանք**<br>Դաունի համախտանիշի ռիսկի I և II եռամսյակների սկրինինգային մարկերները, ինչպես գնահատել ռիսկը:<br>Իրական դեպքերի քննարկում | Նատալյա Մինասյան / Վարդան Սարոյան |
| 12:00-13:00 | Ընդմիջում | |
| 13:00-13:40 | Հետթեստ (առցանց) | |
| 13:40-14:00 | Ամփոփում, վերապատրաստման դասընթացի փակում | |

Թիրախային լսարան՝ մանկաբույժներ, մանկաբարձ-գինեկոլոգներ, նեոնատոլոգներ, գենետիկներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 8-20 հոգի: